

ԺԱՄՄՈՆԱԱԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՍՏ Հ. Շ.

(Շաբ. տիս 1920 թվ. էջ 21)

Նկատի առնենք ծովնթացութեան (մարեթ) շարժումներն այս աւազակյալին վըրայ, երբ իսրայելացւոց բանակը հնա հասեր էր: Նախ Նեղոսի մէկ ճիւղը որ Աղի լինը կը թափի՝ իր նուազութեան ժամանակին մէջ էր, վասն զի Նեղոսի ջուրերը Յունասին կը սկսին առատանալ այն ժամանակ որ Աշխրիկէի բարձր լերանց ճիւները կը հալին, մինչդեռ զարնան ժամանակ Նեղոսի ջուրերուն նուազման ժամանակ ըլլալով, գէպի Աղի լինը թափող ճիւղը այնքան ջուր չէր կրնար ունենալ, մինչ և ծանծաղուտը անանցանիլ ընել տալ, հետևաբար ժամանակին կը սպասէին իսրայելացիները՝ որ կարմիր ծովի կողմէ ծովն ալ ցանձնալով, ամրող բանակը կարենար միւս եզրերը անցնի:

Մանօթ է ամենուն որ ծովը երբեմն կը լեցուի և երբեմն կը ցաշուի, և օրուան մէջ երկու անգամ կը պատահի. ասոր պատճառն է զիմաւորաբար Լուսինն և ապա Արեւը, երբ Լուսնի ծննդեան կամ լրման ժամանակ պատահի, երկու աստղներուն ազգեցութիւնը աւելի սաստիկ է, քան երբ Լուսնի առաջնի կամ վլրջին ցառուրով դի ժամանակը ըլլայ. զարձեալ Զուրօրիեաներուն (զիշերահաւասար) ժամանակ աւելի սաստիկ է քան Արեւակայներուն. երրորդ երբ ձմեռուան կամ զարնան ժամանակ Լուսինը Երկրին շատ մօտենայ, արդէն Արեւն ևս Երկրին մօտ է, ամենէն սաստիկ բարձր ծով կ'ունենանք. իսկ օրուան ընթացքն մէջ երբ Լուսինը վերի կամ ստորին միջօրէականէն անցնի լիբ ծովն տեղի կ'ունենայ իսկ ծագման կամ մարը մտած ժամանակները ցած ծով:

Հիմա պիտի ըննենք Լուսնի ազգեցութիւններ՝ այն պահուն որ իսրայելացիները կը գտնուէին այս ծանծաղուտին դիմաց:

Նախ զարնան ժամանակն էր, ինչպէս իսրայելացւոց զատակէն յայսնի է. երկրորդ՝

Լըում Լուսնի օրերն էր, վասն զի բաղարջակերաց օրերուն մէջն էին. երրորդ անցքին ժամանակը առաւօտսն էր. «Եւ եղի յառաւօտին պահու»: Աղդ ըստ առաջին և երկրորդ ենթազրութեան ծովուն բարձրացած ժամանակն ըլլալով չէին կրնար անցնիլ. իսկ ըստ երրորդ ենթազրութեան ծովուն ցածութեան ժամանակն ըլլալով կրնային այս անցքը ընել, վասն զի այս ժամանակ ծանծաղուտին ջուրերը բոլորովին կը քաշուին: իրաց այս վիճակին մէջ որիշ պատահարներ յանկարծ երեան կ'ելլեն:

Այսինքն, մինչ իսրայելացիք բանակած էին իրովթի զիմացը. Արիսու բռնաւոր Փարաւոնը կը հասնէր ձիաւորներով և կառքերով իսրայելացւոց մօտ, ու կ'ըսէր «Հալածեցից և հասից, բաժանեցից զաւան, և լցուցից ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով, սիրեցէ նոցա ձեռն իմ»: ընդ հակառակն եղաւ, վասն զի միզի պատճառու երկու բանակները՝ Եղիպտոսցւոց և իսրայելացւոց, չխառնուեցան իրարու հետ, և անցաւ այն զիշերը սաստիկ պակելեան հով մը փշելով: Մինչ Արիսու ապահով էր աւարին, յանկարծական երրորդ բանակ մը գաղտագողի ճամբաներէն ու Նեղոսի աջակողմեան ափունցի կողմէ Հնամսես զի առաջնորդութեամբ, օգնութեամբ Եթովվակեան բանակի՝ սիրելով Ռամեսի կը ջանար Արիսուի վրայ իյնալ յանկարծ: Մինչ իսրայելացիք աեսան Արիսուի բանակը ու իրու վկան ու բողոքեցին ընդդէմ Մովսեսի միթէ չկամք գերեզման Եղիպտոսի մէջ և հանեցիք զմեզ հոս անապատին մէջ կոտրել: ցաջալերեց Մովսէս ըսելով այսօր վերջի անգամ կը տեսնէց Եղիպտացիները: Եւ երբ ձեռքը երկնցուց ծովու վրայ սաստիկ հով մը, արևելեան ըստ Վուլգատայի, սկսան վշել բոլոր գիշերը, Հոս զիտելու կէտ մը կայ, Մովսէս երկու անգամ ձեռքը դէպի ծովը կ'երկնցնէ, մին՝ ծովը ետ դարձնելու համար, և երկրորդը նոյնը միացնելու համար. և այս երկու անգամներն ալ հովի վշելը կը յիշատակուի

օրհնութեան մէջ « Եւ հոգմով արտատուս թեան քով պատառեցան ջուրք... Ալաքեցեր զողմն քո և ծածկեաց զնոսա ծով» (Եւը Ժ. 8, 10), Արդ Վուզատայն և անոր հետեւող Երոպական թարգմանութեանց մէջ արևելեան հովը կը լիշտակուի. իսկ Եօթանասունք կը զնեն հովմն հարաւոյ, ուստի այս երկու հովերը զաս զաս ժամանակ պատահած ըլլալն յայտնի է, որով երկու թարգմանութիւնները իրարու չեն հակասեր, այլ մին կը խօսի, ծովը բաժնեւու ժամանակին, արևելեան պաղ քամին վրայ. իսկ միւսը հարաւոյ տաք քամին վրայ, որ վիշեց ծովը միացնելու ժամանակ: Արդ գիշերն ամրող պաղ արևելեանը փշել սկսաւ, և նոյն ժամանակ ալ տեղի կ'ունենար ծովուն ետ քաշուելու պատճութիւնը՝ ցած ծովլոնթացուս թեան պատճառաւ, որով ծանծաղուտի երեսի ջուրերը բաշուեցան, և պաղ հովի սաստկոթեան պատճառաւ աւազին տակը գտնուող ջուրերը պաղեցան: Արդ ծանօթ է ամենուն սատի ընդլայնման յատկութիւնը, որոյ հետեւանքով ծանծաղուտին աւազը բարձրացած է այնպէս, որ Աղի լիճին և կարմիր ծովուն հաղորդակցութիւնը կտրած էր. « Զի ի ջրոյն ցամաքութենք՝ որ ի ներքոյ կայր յատակ երկրի երևէին » (Իմաստ. Սող. ԺԹ. 7):

Անցան իսրայելացից լիի և ծովու մէջտեղի ցամացէն, որով լիճն մէկ կողմէն և ծովն միւս կողմէ իսրայելացւոց համար պարսպի տեղ ծառայեց, և այս իմաստն կուտայ. « Եւ եզէ ջուրն պարիսպ ընդ աջմէ և ընդ անեկէ իրեանց »: Այս պատճառաւ Եզիպատացից շկրցան առաջն առնով կամ պաշարել և երբ մէզը և խաւարն փարատեցաւ տեսան չոր անապատ մը, և իսրայելացւոց վերջապահ գունդին անցնիլը. « Ասաց թշնամին, հալածեցից, հասից բաժանեցից զաւարն »: Մտան իսրայելացից լինայի անապատը և Մովսէս զաւազանը երկնցուց և սկսաւ կիզիչ հով մը

հարաւոյ փշել: Եզիպատացից մեծ թափով իսրայելացւոց ետևէն պնդել սկսան, անցընելու փորձ փորձեցին մտնելով չորցած ծանծաղուտի մէջ. տաք հովի ազդեցութեամբ սկսան աւազի տակի սառած ջուրերը լուծուիլ. և ի նմին ժամանակի բարձր ծովլոնթացութիւնը վրայ հասնելով՝ ահազին կոհակները կը յառաջանային և թումր ձեւացած աւազը կը ցածնար որքան որ մէջի սառը կը լուծուէր, և Աղի լիճն որ գիշերն ամրող սառած թմբին պատճառաւ փակուած մացեց էր սկսաւ իր ընթացքը դէպի կարմիր ծովը: Մտեր էին Եզիպատացից ծանծաղուտին մէջ մեծ թափով, բայց կառցերուն ծանրութենէն և աւազին թուշնալէն սկսան կապը անիւները ընկդմիլ աւազին մէջը, ետ զառնալ մտազրեցին և փախչիլ, բայց ուրիշ ըլլոնութիւն մը վրայ կը հասնէր « Եւ բռնութեամբ վարէր զնոսաւ: Յանկարծ տեսաւ Հուամսի բանակը որ վրանին կը յարձրէիր: Աղի լիճի ալիքները արդէն հասեր էին և խառնուեր ծովլոնթացութեան կոհակներուն և Եզիպատացիները բռնուեցան երկու ջուրերուն մէջ. « Եւ թօթափեաց ջէր զԵզիպատացիս ի մէջ ծովուն. Փարաւոն հանգերծ կառօց ընկդմեցան ի հոսանն ջուրց »: Իսրայելացից տեսնելով Եզիպատացիներուն ջուրի երեսը տատանիլը, սկսան օրհնութիւն տալ Աստուծոյ իրենց վրայ ցոյց տուած զթութեան և վիրենը Եզիպատացւոց խիստ ծառայութենէն ազատելուն համար. անդին միւս եզերցի վրայ Հուամսէս Գ տեսաւ Արիսուի բանակին ջնջումը, և կը զառնար իրը յալթող և տապալող բռնաւորական Եշանութեան և իր օրինաւոր գահուն վրայ կը բարձրանար:

(Տարումակիլի)

Հ. ԽՈՐԵՆ Ա.

Մանօք. Ըստ արտացին պատմաց կարմիր ծովու մէջ խեղուող Փարաւոնը եղած է Մէնեպթաէ, մինչ ըստ մը ուսումնական եղած է: